

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- 2019 թ. № -Ա

ՐՅԱՆ ԶԱՄԱՐ ԲՈԱԹՐԱՅԹԻՆ, ԱԼԲԵՐՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ
ԱՐԹՈՒՐ ԷԴՈՒԱՐԴԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի
Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի № 89-Ն որոշման
հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը *որոշում է*.

1. շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել՝

1) Րյան Զամար Բոաթրայթին (ծնված՝ 1992 թվականի դեկտեմբերի 27-ին,
հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 9),

2) Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին (ծնված՝ 1993 թվականի նոյեմբերի 26-ին,
հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 9),

3) Արթուր Էդուարդի Խաչատուրյանին (ծնված՝ 1992 թվականի օգոստոսի 4-ին,
հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 9):

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՐՅԱՆ ԶԱՄԱՐ ԲՈԱԹՐԱՅԹԻՆ, ԱԼԲԵՐՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ
ԱՐԹՈՒՐ ԷԴՈՒԱՐԴԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Րյան Զամար Բոաթրայթին, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին և Արթուր Էդուարդի Խաչատուրյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Րյան Զամար Բոաթրայթին և Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի № 1098-Ա որոշմամբ, իսկ Արթուր Էդուարդի Խաչատուրյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի № 962-Ա որոշմամբ տարկետում է տրվել մինչև 2019 թվականի ամառային զորակոչը: Քանի որ նրանց 27 տարին լրանում է 2019 թվականին, հնարավոր չէ նրանց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալ: Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել Րյան Զամար Բոաթրայթին, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին և Արթուր Էդուարդի Խաչատուրյանին ազատել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից:

Րյան Զամար Բոաթրայթը, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանը և Արթուր Էդուարդի Խաչատուրյանը հանդես են գալիս բասկետբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքական թիմում, աչքի են ընկնում արդյունավետ խաղով, և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը կարևորում է բասկետբոլի Հայաստանի Հանրապետության հավաքականի կազմում նրանց մասնակցությունը Եվրոպայի առաջնության ընտրական խաղերին:

Րյան Զամար Բոաթրայթը, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանը և Արթուր Էդուարդի Խաչատուրյանը հաշվառված են Երևանի Կենտրոնի տարածքային զինվորական կոմիսարիատում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՐՅԱՆ ԶԱՄԱՐ ԲՈԱԹՐԱՅԹԻՆ, ԱԼԲԵՐՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԹՈՒՐ ԷԴՈՒԱՐԴԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Րյան Զամար Բոաթրայթին, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին և Արթուր Էդուարդի Խաչատուրյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՐՅԱՆ ԶԱՄԱՐ ԲՈԱԹՐԱՅԹԻՆ, ԱԼԲԵՐՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԹՈՒՐ ԷԴՈՒԱՐԴԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐՄԱՏԻՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Րյան Զամար Բոաթրայթին, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին և Արթուր Էդուարդի Խաչատուրյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ նորմատիվ այլ իրավական ակտերի ընդունման կամ գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՐՅԱՆ ԶԱՄԱՐ ԲՈԱԹՐԱՅԹԻՆ, ԱԼԲԵՐՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԹՈՒՐ ԷԴՈՒԱՐԴԻ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ. հ.	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	ՀՀ պաշտպանության նախարարություն 21.05.2019 թ. № ՊՆ/510/596-2019 գրություն	«Րյան Զամար Բոաթրայթին, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին և Արթուր Էդուարդի Խաչատուրյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:	Ընդունվել է ի գիտություն:	
2.	ՀՀ արդարադատության նախարարություն 31.05.2019 թ. № 01/27.1/12051-2019 գրություն	«Րյան Զամար Բոաթրայթին, Ալբերտ Նիկոլայի Թադևոսյանին և Արթուր Էդուարդի Խաչատուրյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:	Ընդունվել է ի գիտություն:	